

Պատասխաններ
հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի հարցաշարերի

10-րդ դասարան

1. ուրախությունից մնացին կարկամած. հետապնդող զինվորները կանգնել ու չէին համարձակվում առաջ գալ: Երաժիշտները հասել էին իրենց երկիրը: Վերնագիր՝ Հայրենի հողի բույրը, Մայր հողի բույրը, Հայրենի հողի շունչը, Մայր հողի կանչը և այլն
2. մայր, սուրբ, պայծառ, դժբախտ, դրախտային, անընկճելի, սրբազան, հյուրընկալ, անպարտ, գմբուխտաշող, լուսավոր, փթթուն, շենշող և այլն
3. **բղջախոհ** – վավաշոտ, անառակաբարո, տոփասեր, ցանկասեր,
հարձ – վարձակ, վարձու կին՝ պարուհի
նանրամիտ– դատարկամիտ, անխելք, նաև՝ գծուծ, ճղճիմ
հացկատակ– պնակալեզ, շողոքորթ, քսու, շողոմ, քծնող, երկերեսանի, փարիսեցի
կոչնական – հյուր, հրավիրրյալ, հրավիրված անձ,
աստանդակ– տարագիր, պանդուխտ, նժդեհ, վտարանդի
ասպագեն – ձիու գենք ու զրահ, նաև՝ ձիու թամբը, ասպանդակը և սանձը,
քառասմբակ– քառատրոփ, քառարշավ, արշավասույր, ձիու արագ վազքի այն տեսակը, երբ երիվարը չորս ոտքերը միաժամանակ բարձրացնում է օդի մեջ,
ասպագեն
ադոթարան– այգաբաց, լուսաբաց, արևածագ, արշալույս, առավոտ, վաղորդայն
շամանդաղ– մեզ, մշուշ, մառախուղ, մուժ, թուխպ
4. ա) ընդհանուր գծագրությամբ երևալ, պատկերանալ, բ) փխբ. ձև ստանալ, ձևավորվել, գ) փխբ. նշմարվել, երևալ, դ) փխբ. պատկերանալ, անդրադառնալ, արտացոլվել, արտապատկերվել
5. **կանոն**– կանոնակարգ, կարգուկանոն, կանոնապահ, կանոնավոր, կանոնապահ, անկանոն, տարականոն,
կույս– կուսակալ, կուսակից, տարակուսանք, տարակուսություն, տարակուսելի,
անց – անցում, անց, առանցք, անանց, անանցանելի, գետանց, անցարգել, անցաթուղթ, անցագիր,
հակ– հակում, հակված, հակամետ, անձնահակ, գլխահակ
6. **դեգերել**– աշխարհից աշխարհ ընկնել, աշխարհը ոտքի տակ տալ և այլն,
զայրանալ– ավերից դուրս գալ, արյունն աչքը կոխել և այլն,
գլխատել – գլուխը թոցնել, սրի քաշել,
սահմոկել– լեղին ճաքել՝ ջուր դառնալ, լեղին պատռվել, արյունը երակներում սառչել,
հեռու– յոթ սարից այն կողմ, սարերի հետևում
7. արևմուտք, կնամեծար, զրախոսություն, սրբագրիչ
8. Բժի՛շկ, նախ քեզ բժշկի՛ր/ բուժի՛ր/ - նշ.՝ նախ ինքդ քեզ ուղղի՛ր, հետո ուրիշներին դաստիարակի՛ր: Ըստ Աստվածաշնչի:
9. Դժվարին վիճակից դուրս գալու միջոց՝ հնար: Ըստ հունական դիցաբանության՝ Թեսեոսը Կրետեի արքայի դստեր՝ Արիադնայի տված կծիկի օգնությամբ կարողանում է դուրս գալ լաբիրինթոսից:

Գնահատման չափանիշներ
հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի հարցաշարերի

10-րդ դասարան

2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
9. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր: